ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.07.2019թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/88

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, հիմք ընդունելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու մասի 26.06.2019թ. թիվ ԵԴ/18390/02/19 որոշումը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Երևանի քաղաքապետարանի 07.06.2019թ. թիվ 01/61-10798 գրության հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության 13.06.2019թ. թիվ /26/9887-2019 գրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2019/88 ընթացակարգը կասեցնել մինչև ԵԴ/18390/02/19 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի կայացումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ